

Մ Ա Ս Ի Ս

Լ Ր Ա Գ Ի Ր

ԸՌԳԱՅԻՆ, ԲԱՂԱԲԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տարեկան գինն է 100 դրամը :
Վեցամեայ " " 55 " "
Մեկ շաբաթուրդ տողին 40 փարայ է :
Երկու " մեկ ամիսը " 30 " "
Չորս " " " 20 " "
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 ին. և 16 ին կը սկսին :

Գուրու երթալը լրագրութեան ճամբան
ճամբը առնողն վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ կամ ար. և
իյն գրութիւն, խմբագրին պիտի ուղ-
ղուի : և ասոնց ճամբան ճամբը իւր.
կողմն վրայ է :

ԲՈՂԱՅԻՆ ԳԼԻՐԻ ԹԻՒՆ

ԱՋԳԱՅԻՆ

Կամակ մը :

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնաբարձութիւնը : Գործառնութեան խնդիրը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՅԻՆ : Կայտնութիւնը պարտաւորութիւններ : - Տես.
շուքեան հրովարտակ մը : - Մարտիկայի գրքի
խալին մեքենան :

ԵՐԿՐԱՆ : Ուրիշ ինչքանի գրքի մասնակցի և ուրիշ
ցածնեան համար ժողովրդեան երկիրը ցածու-
թիւնն ու մեծարարը : - Վնդիւրի և Վնդիւրի
յի մէջ ծովուն տակէն հեռագիր հաստատե-
լու գիտաւորութիւն :

ԵՍԻՍԻՆ : Բեշթի գիտաւորական կրթութեանց կատա-
րումը : - Կայտնի ճանապարհորդութիւնը :
- Բարձրագոյն մէջ քօլեա հիւանդութիւն :
ԲՐՈՒՍԻՆ : Բօլեա հիւանդութեան նուազիւր Պեռ-
կի մէջ և ուրիշ տեղեր :

ԳԵԼԵՐԱՆ : Կախազանի ընտրութեան պատճառաւ
պաշտօնէն հրաժարում :

ԴՈՒՍԱՅԻՆ : Պաշտօնէն փախուցիկութիւն : - Կախազանի
մէջ գործող գեղարք մը :
ԵՍԵՐԻՆ : Ընդհանուր փոփոխութիւն : - Բաղդադի
գիտական ծրար :

ԳԱՄԱՅԻՆ : Պայտնակութեան կոտորած : - Գործադիր
մեքենայ մը : - Վաճառականութեան վիճակը :
ՀԱՂԱՅԻՆ : Պայտնակ պատկերով շարունակութիւն :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Սկզբունք. վաճառականութեան :

ԸՌԳԱՅԻՆ

Վենետիկի Սխիթարեան վարդա-
պետաց տետրակին վրայ վշտացեալ
բարեկամ մը հետեւեալ նամակը մեզի
յուղարկած է, որ լրագրիս մէջ հրա-
տարակենք :

« Յարգոյ Հրատարակիչ :

Օմիւսնիա, 3 հոկտ. 1852

« Լրագրոյդ 35 թուոյն մէջ Վե-
նետիկի Սխիթարեան միաբանութեան
կողմէն գրուած նոր տետրակի մը վը-
րայ յօդուած մը կարդալով, փութա-
յալ յիշեալ տետրակի ձեռք ձգելու,
և ծայրէ ի ծայր կարդալով՝ չքսեմ
զարմացայ, այլ զարհուրեցայ տեսնա-
լով, որ ազգասէր և կրթեալ համար-
ուած միաբանութիւն մը ինչպէս որ
գրեւէք, Հռովմի Պապին առջեւ ի-
րենց դէմ եղած ամբաստանութիւն
ները ցրելու կամ մանաւանդ հաստա-
տելու համար՝ ոչ միայն իրենց ազգին
ամենէն սիրելի և սրբալոյս մէկ բանը
այսինքն կրծքը՝ բոլոր աշխարհի ազ-
գաց և ազանց առջեւ անդուռն բե-
րանով կը նախատեսն ու կը հայհոյեն,
այլ միշտեւ հիմա իրենց ունեցած քիչ
շատ բարեօրական աշխատութիւնե-
րը՝ ազգին համակրութիւնը գրաւե-
լու և անով անոր կրօնին ու ազգու-
թիւնը մէկանց պապականութեան խա-
ւարին մէջ անհետացնելու անվերջ մի-
ջոյն և գործի մը քսած ըլլալին՝ հա-
մարձակ և անխիղճ խոստովանելով,
ազգին սիրտը անգարմանելի խոցելով
կը վիրաւորեն :

« Չեմ ուզեր, յարգոյ Հրատարա-
կիչ, և պէտք ալ չունիմ՝ ասանկ յայտ-
նի ամենուն տեսած, կարգացած ու
հասկցած նիւթի մը վրայ երկար խոր-
հրդածութիւններ ընելով անոր հոգ-
ւոյն և բարոյականութեան յարգը պատ-
ուական լրագրոյդ ընթերցողներուն
հասկնելու : Ղշմարտաւեր, ազգասէր
և բարեկրթի հայ մը՝ քրիստոնէական
հաւատոյ ճշմարիտ պաշտօնեայ մը աշ-
խարհային փառաց և անձնական չնչին

շահու համար՝ երբեք իւր սիրելի ազ-
գը չ'անգոսնէր. իւր ծնած մայր եկե-
ղեցին չ'անարգէր, չի թշնամանէր :

« Վենետիկի Սխիթարեանները՝
ազգատեցութեան ու մարդկայինութեան
թեան տխուր օրինակ մը առին : Բա-
ղդադիներուն յաղթելու համար՝ ապե-
րախտութեան նողկալի մը ցանկալով ի-
րենց գրուած զարդարելու պէտքին : Ա-
զգային լրագիրները՝ իբրեւ իրենց հա-
մագրի եղբայր՝ Վենետիկի Սխիթար-
եանց պատիւը պաշտպանեցին. բայց
ափսոս, իրենց մարդասիրական ջանի-
քը փոխարէն իրենց ազգին և եկեղեց-
ւոյն արհամարհութիւն, թշնամանք և
նախադէպ հատուցում ընկալան : . . .

« Եւս ձախարհ տետրակին մէջ Ս-
խիթարեանը կը գրեն, թէ « Փարիզի
մէջ անցեալները մեռնող Պալեան Յա-
րութիւնը իրենք չեն թաղած, սխալ
է : » Ս. քառմանը գրուած : Երբեք
այս բռնալ՝ քրիստոնէական մարդասի-
րութեան սուրբ պարտքը կատարած
ըլլալին՝ կ'ուզեն հասկնել : Եւս
խօսք մը՝ աշխարհիս ամենէն անկիրթ,
վարենի և բարեարտ մարդոց բերնէն
անգամ ընել սոսկալի է. ուր մնաց
այսպիսի բարեկրթութեամբ ու ազգա-
սիրութեամբ պարծող միաբանութեան
մը բերնէ :

« Յիշատի շատ աղնուախոհ և գու-
վելի են այս մասին արեւելք բնակող
իրենց ազգին անկիրթ ու բիրտ երեւ-
ցած մեր համագրի եղբայրը, որ քր-
իստոնէական մարդասիրութեան սք
պարտքը Սխիթարեանց հասկցած կեր-
պովը չի կատարեցին առկէ վեց ամիս
առաջ, ինչպէս որ հետեւեալ պատ-
մութեան կը հասկցուի :

« Օմիւսնիոյ մօտ Եւսոյն քաղաքին
մէջ, ուր միայն լուսաւորչական ուղ-
ղափառ հայոց անկղեցի կը գտնուի,
Հռովմեական հայ մը կը մեռնի Գ. ա-
նուն : Եւս մեռեալը թաղելու ուրիշ
կերպ հնար մը չի գտնելով, իր բարե-
կամները հայոց կը դիմեն ու կ'աղաչեն,
որ մեր եկեղեցւոյն մէջ թաղելու ըն-
դունին :

« Հիմա կը հարցնեմ արդարաւէր
ընթերցողներ, թէ Եւսոյնի հայ ժողո-
ւորը ինչ ընելու էր այս առթիւ
մէջ. Սխիթարեանց անկողնի քարո-
ղած վարդապետութիւնը ի գործ դը-
նելու էր, թէ քրիստոնէական մարդա-
սիրութեան պահանջածը կատարելու
էր : Եւս լուսաւորչական ուղղափառ
եկեղեցին իբրեւ ճշմարիտ աւանդա-
պահ քրիստոնէական հաւատոյ, մեզի
կը սորվեցնէ, ոչ միայն մեր համագրի
եղբարքը սիրել, այլ և օտարազգի բը-
րիստոնէական ալ, այլ և բոլոր մար-
դիկ և ձեռքերնուս եկած օգնութիւն
և նպաստը անոնց ընել : Եւս համար՝
Եւսոյնը հայ հասարակութիւնը յիշ-
եալ հռովմեաւորական մարմինը հան-
դիսիւ կը յուղարկուորեն և իբրեւ
քրիստոնէայ՝ քրիստոնէաբար կը թա-
ղեն, և չեն ուզեր, որ մարդկային
նութեամբ անոր մարմինը իբրեւ զա-
ղըր դիակ մը՝ անթաղ թողուն, անց-
եալները Հռովմայի տետրութեան մէջ
մեռնող յոյն քրիստոնէին նման :

« Եւսոյնի այն ժողովրդեան, որուն
եկեղեցին ասանկ գիտութիւն, հե-
ղութիւն և մարդասիրութիւն կը քա-
րողէ :

« Վայ ան ժողովրդեան, որուն ուղ-
ղափառութիւնը՝ իր ազգակից եղբայր
ները ատելու, թշնամանելու և նա-
խադէպ վարդապետութեան վրայ կե-
ցած է :

« Եւսոյնին անունը քրիստոնէա-
թիւն է. երկրորդին ինչ անուն տա-
լու է, թող զրուցէ մեզի տետրակին
հեղինակը :

« Կ'աղաչեմ, յարգոյ Հրատարակիչ,
հաճեցէք ի սէր ազգիս հրատարակե-
լու այս նամակս : որուն համար շնոր-
հակալ ըլլալով,

Ս. Մ. »

ԲԱՂԱԲԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւսոյնը չաբթու կայսերական հը-
րամանաւ Պրուսայի նախկին կառա-
վարի Սիլվիան փաշան Բերլինի
(Հալեպ) ընդհանուր կառավարիչ ան-
ունեցեալ փոխանակ հանգուցեալ
Օմման փաշային :

Հանք գաւառին նախկին ընդհա-
նուր կառավարիչ Վարդ փաշան թը-
հալայի կառավարիչ անունանեցաւ :

Իւլեմաներուն նախագահ Եւսոյնը
տե Համուրլահ Էֆենտիին մեռնե-
լուն պատճառաւ, տեղը հասարակաց
կրթութեան ժողովին նախագահ Եւ-
սիւլ հաք Էֆենտին ընտրուեցաւ :

Փարիզի նորընտիր գեսպան Վ. Էլ-
փաշային զիւսնադպիր Վալդ պէյը
Պենալոպայի կառավարիչ անունանե-
ցաւ :

Պանայի նախկին կառավարիչ Վ. Է-
լի փաշան Բ. Գրան կողմէն գեսպան
անունանեցաւ ի փարիզ փոխանակ Բա-
լմաքի իշխանին, որ միայն արտաքոյ
կարգի նպատեմաւոր և լիազօր պաշ-
տօնեայ կը կոչուէր :

Եւսոյն ծանր և միանգամայն փափուկ
պաշտօնին համար Վ. Էլի փաշային ու-
նեցած արժանաւորութիւնը զինքը
ճանչցողներուն աւելորդ է հասկնել.
իսկ չի ճանչցողներուն համար՝ բաւա-
կան կը համարենք օտար ազգաց վիտ-
յութիւնները հոս գնել, ինչպէս որ
կը գտնուին տեղւոյս գաղղիական քա-
նալ լրագրին մէջ :

« Վ. Էլի փաշային այս կարեւոր
պաշտօնին համար ընտրուիլը՝ ուրա-
խակ է : Խորհրդոյ ատենի նախա-
գահ մեծապատիւ Սուրաֆա փա-
շային որդին ըլլալով, այս ծաղկահա-
սակ պաշտօնատարը զօրաւոր կրթու-
թիւն առած է, և յաջողութեամբ կը
գրէ և կը խօսի գաղղիերէն լեզուն :
Բարուց և մտաց գեղեցիկ ձիւքեր ու-
նի : Իւր հայրը հարստութեամբ, ար-
ժանաւորութեամբ և ամենուն առ-
ջեւ ստացած արդար վարկուածով կայ-
սերութեան ամենէն մեծ մարդոց մէկն
ըլլալով, Վ. Էլի փաշան՝ ասանկ հօր մը

ձեռքին տակը կրթութեամբ Վաղղիոյ մայ-
րաքաղաքը գտնուող գեսպաններուն
մէջ նշանաւոր կարգ մը պիտի ունե-
նայ :

« Եւսոյնութեամբ սիրտ վատարկող,
չափաւոր և քաղաքավար ըլլալով, կրե-
նանք աներկմիտ ըլլալ, որ ամենայն
փութով կ'աշխատի Բ. Գրան և Գաղ-
ղիոյ մէջ եղած յարաբերութեանց կա-
պերը աւելի զօրացնելու, իր կառա-
վարութեան օրինաւոր շահերը միշտ
իրեն աչքին առջեւ ունենալով :

« Սորվելու և զիտելու վարժուած
ըլլալով, իւր երթալը լուսաւորութեան
ընդարձակ կեդրոնին մէջ և մանաւանդ
Եւսոյնայի երեւելիներուն հետ հա-
ղորդակցելով, այս առաջին անգամ
իւր առջեւ բացուած ասպարէզին
մէջ յաջողութեամբ քալելու համար
իրեն պէտք եղածը շուտով ձեռք կը
բերէ : Եւսոյնը, արդարաւէր և քաղա-
քավար ըլլալով, քիչ ժամանակի մէջ
իր պաշտօնակիցներուն բարեկամու-
թիւնը, և Փարիզի ընտիր խելքերուն
յարգը և համակրութիւնը կ'ստանայ :
Վ. Էլի փաշան ամեն պէտք եղած ձիւ-
քերը ունի իւր թագաւորէն առած
և առնելու պաշտօններուն մէջ երե-
ւելի և արժանաւոր ըլլալու : Եւս
ձիւքերուն փորձերը արդէն մօտ ժա-
մանակներս ցոյց տուաւ իւր հանձա-
րեղ կառավարութեան Պանայի մէջ,
ուր այնչափ տարբեր կիւքեր կը յու-
ղեն, և այս ընդարձակ նահանգէն մեկ
նիլու հասարակ ամենուն կ'սկիզբ պատ-
ճառեց : Սէկ խօսքով, այս երիտա-
ւոր քաղաքագէտը աղէկ և արժա-
նապէս պիտի ներկայացնէ Տաճկաստա-
նը Փարիզի մէջ : »

Եւսոյն թէ Վ. Էլի փաշան ամուսն
13 ին պիտի մեկնի մայրաքաղաքէն իւր
պաշտօնին երթալու, և իւր պարի եղ-
բայրներէն մէկն ալ՝ Սէկ մեմէն պէյը
որ աղէկ յոյսեր կուտայ արդէն, երկ-
րորդ քարտուղարի պաշտօնով հետը
պիտի երթայ :

« Օմիւսնիոյ Լիւթաւիալ լրագրին
իրկուած նամակի մը մէջ հետեւեալը
կը կարդանք :

« Եւսոյն չաբթու ծայրէ ի ծայր մի-
այն մէկ գործ մը, մէկ ամենակարեւոր
գործ մը զբաղեցուց կայսերական կա-
ռավարութիւնն ու հասարակութիւնը
այն է՝ յիսուն միլիոն Ֆրանքի փոխա-
ռութեան գործը : Եւսոյն փոխը մերժե-
ւեցաւ : Փարիզի մէջ ստորագրուած
պայմանները՝ բոլորովին անընդունելի
երեւցան խիստ ծանր ըլլալով : Ստա-
րագրուողներուն արդէն տուած ստա-
կը, որ բոլոր գուժարին մէկ քաղաքին
չափ կ'ըլլէ, չափովն ու ճախքերով ի-
րենց պիտի վճարուի :

« Երբոր կառավարութեան այս զի-
տաւորութիւնը խմբուեցաւ, հարե-
նաւորական մեծ նախանձ մը յայտնե-
ցաւ ժողովրդեան ամեն կարգերուն
մէջ, գլխաւորապէս իշխանական տն-
ւանց մէջ, և մեծ գուժարներ վճարե-
լու իրենց իրենցմէ խօսք տուին տե-
րութեան պաշտօնակիցները, իւլեմա-
ները և սեղանաւորները : Եւսոյն չորս
աւուր մէջ այս ազգային փոխը մեծա-

մեծ գումարներու հասաւ : Ստորագրելոյ ցուցակը , որ աչքերնուս առջեւ ունինք և լըմնայն նէ պիտի հրատարակենք , որդէն 160 միլիոն զուգուշը անցած է և քիչ աւելոր մէջ 200 միլիոնը շատ պիտի անցնի , և ան ալ մի նակ մայրաքաղաքիս մէջ :

« Լրդ երեւակայէ թող մէկը , թէ ինչ կրնայ ժողովուրդ եթէ կառավարութիւնը պէտք ունենար իրաւունքներու թիւերը գաւառներէն ուղղելու : Եթէ կա գեղեցիկ օրինակ մըն է , որ Տաճկաստանը կուտայ : Եթէ պայծառ ու յաղթական կերպով կը պատասխանէ շատ անտեղի և կրիւք բարբոքեալ ամբաստանութիւններու , որ շատ անգամ իրեն դէմ կ'ըլլայ :

« Եւս բանը շատ խորունկ տղաւորութիւն ըրաւ եւրոպացւոց մաքին վրայ :

« Կառավարութիւնը իրաց այս վեճակին հարկաւոր եղած ամեն միջոցները ձեռք առաւ : Բայկմաքի իշխանը Փարիզէն կանչուեցաւ :

« Երանի պարագաներու մէջ հասարակութեան սիրտը կրնար անհանգիստ ըլլալ դրամասեղանին (պանքա) վեճակին վրայ : Իսկ այս օգտակար հաստատութեան ամենեւին վտանգ չի կայ : Եւս պիտի շարունակի և այն կերպով կարգի պիտի դրուի , որ թէ վաճառականութեան և թէ առ հասարակ երկրին իրմէ յուսացուած ամեն օգտակար ծառայութիւն ընելու կարող ըլլայ :

« Եւս կտորը բոլորովին որոշուած լըմնացած է : »

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԱՂՁԻԱ : Կայսերութեան հաստատութեան վրայ թէ որ դեկտեմբերի 2-էն ետքը տարակոյս ունեցող կար նէ , Երաւագահ իշխանին այս անգամ ըրած ծամբորդութիւնը , և մանաւանդ ի խնի մէջ ըրած ատենաբանութիւնը (Ստիսթի 36) բոլորովին կասկածները փառատեցին և ամեն մարդ ժամէ ի ժամ անհամբերութեամբ կայսերութեան հրատարակութեան կ'սպասէ :

Լրդէն թիւիւրերի պալատին մէջ պատրաստութիւններ կ'ըլլան :

Իսկ ռուսաց դեսպանին Փարիզէն կանչուելուն և Պապին Վաղդիա երթալու գիտատեղութեանը վրայ Փարիզէն հետեւեալը կը գրեն ի յայ լըրագրին :

« Եւրոպէն ձեռք իմացնել , որ ռուսաց տէրութեան կողմէն Փարիզի դեսպան Պ. Բիսկէփ բացակայութեան ժամանակը , գործերը դեսպանատան առաջին քարտուղար Պալպայն իշխանը պիտի տեսնէ , որով ռուսաց կայսերութեան և իւր լաբօլէոնի կառավարութեան մէջ եղած քաղաքական յարաբերութիւնները չի պիտի խափանին Պ. Բիսկէփ երթալովը , որ սը իսկ կարծիք տուաւ ամենուն թէ ռուսաց տէրութիւնը թշնամի է Վաղդիայ նոր կայսերութեանը : Իսկ Վաղդիայ դեսպան Պ. Բասթիլայաթաքին Ս. Բեդրսպուրիէն Փարիզ գալը՝ այն պատճառաւ է , որ իւր լաբօլէոնի զխաւոր տէրութեանց քով ունեցած դեռ պաններուն ամենն ալ ետեւէ ետեւ Փարիզ կը կանչէ այս միջոցին , որ արտաքին գործոց վրայօք իր ունեցած բուն գաղափարները անոնց իմացնէ :

« Կը հաստատեն , թէ կայսերութեան հրատարակութեան ետք՝ հիւսիսային տէրութեանց քով գտնուող Վաղդիայ դեսպաններուն աստիճանը պիտի մեծնայ , արտաքին կարգի պատգամաւորութեան դեսպանութեան փոխուելով :

« Թէպէտ անտարակոյս ենք , որ առաջիկայ դեկտեմբերի սկիզբները

կայսերութիւն պիտի հրատարակուի , բայց դեռ յայտնի չէ , թէ թագաւորութեան արտադրութիւնն ալ այն ժամանակը պիտի ըլլայ , թէ գարնան պիտի մնայ : Եւս բանը Պապին կախուածն ունի , որովհետեւ ան պիտի օժէ գաղղիացւոց նոր կայսրը :

« Եւս վրայօք Վաղդիայ կառավարութեան կողմէն Պապին առաջարկութիւն եղած ժամանակը , Պիոս Թ. ուրախութեամբ յանձն առեր է իւր լաբօլէոնը կայսր օժէ փոխարէն այնչափ ծառայութեանցը , որ վերջին մէկ քանի տարուանս մէջ Պապին ըրաւ :

« Կը մնայ միայն գիտնալ , թէ Պապը պիտի կրնայ անվտանգ ճանապարհորդել ձմեռ ժամանակ՝ Լոնդոնէն մինչեւ Փարիզ , թէ որ չի կրնայ նէ օժման հանգէսը գարնան պիտի մնայ : »

« Տեսչութիւնը նոր հրովարտակ հանելով կ'աղբիւր , որ ինչպէս Փարիզի մէջ , անանկ ալ Վաղդիայ ուրիշ ամեն քաղաքացի մէջ 16 տարեկանէն վար տղաք խահուէտուն , գինետուն կամ ուրիշ զուարճութեան տեղերը չի մտնեն առանց հայրերին կամ ազգականներէն մէկը հետեւին ունենալու :

Փափաքելի է , որ այս կերպ օրէնք մըն ալ մայրաքաղաքիս մէջ հաստատուէր , ուր ցաւելով կը տեսնենք , որ 12-15 տարեկան տղայք համարձակ խահուէտունները և մինչեւ գինետունները յաճախելու գէշ սովորութիւնը հիմակուց կ'ստանան , որ բարոյ ապակառութեան զատ առողջութեան ալ խանգարում կը պատճառէ :

« Եւս իրաւի պիտի մեքենան Վաղդիայ լրագրներուն գլխաւոր խմբագրութեանը եղած է խօսելու և ամենն ալ անոր երեւան ելելու պարագաները մանրամասնաբար կը պատմեն : Սեպտեմբրայ երկար պատմութիւններուն մէջէն հետեւեալ տեղեկութիւնները կը քաղենք :

Եւս մանուկէ մը ի վեր տեսչութիւնը իմացեր էր , որ գաղտնի ընկերութեան թիւն մը կազմուէր և Երաւագահ իշխանին կեանքը բառնալու համար : Եւս եղեռնական նպատակը կատարելու յարմար տեղ ընտրել էին Վարսիլիա քաղաքը : Տեսչութեան ընդհանուր տընտրելի Պ. Սիլվէն Պլո ռուսագրութեամբ այս ընկերութեան ընթացքը կը գիտէր :

Եւս իրաւի մեքենայ մը պատրաստուելու խորհուրդ ընելով , ընկերութեան անդամներէն մէկ քանին զանիկա շինելու ձեռք զարկին և քիչ ժամանակի մէջ լըմնացին : Եւս մեքենան կը բազմանար երկու հարիւր յիսուն հրացանէ և չորս թնդանօթէ քսան և ութ մասն բաժնուած : Եւս քսան և ութ կտորը տեւել զգուշուէ համար այլ և այլ տեղուանք դրուեցան՝ մինչեւ որ յարմար տեղ մը գտնեն ու մեքենան պատրաստեն :

Համախոհները այն ժամանակէն սկսան իրենց ուղած յարմար տեղը փնտռելու , որ բնականաբար Երաւագահ իշխանին անցնելու ճամբուն վըրայ պիտի ըլլար : Եւս Վարսիլիայի իջք փողոցին մէջ տան մը առաջին գոտիները ընտրեցին , ուր պիտի տան նէին ու պատրաստէին մեքենան Եւս խաղաչին Վարսիլիա դաւառն առջի գիշերը : Իսկ կասկածի երթալով այս առաջին ընտրութեան չի հաճեցան : Եւս փողոցի տուն մը վարձեցին նոյն փողոցին մէջ , որ երկու յարկ ունէր , և ամեն մէկուն մէջ երկու սենեակ փողոցի վրայ երեք պատուհանով : Սեպտեմբրայ յարկին մէջ պիտի դրուէր :

Սեքենան և դաւաղիւնները բոլորուած ատենին , մինակ մէկը այս տան մէջն էր մեքենային հետ , միւսներէն ոմայք իրենց տունն էին , ոմայք ալ զանազան տեղեր էին , ուր տես

չութիւնը զիրենք կը դիտէր :

Եւս դաւաղութեան երեւան ելելէն ի վեր տան երկու հոգի բոլորուէր և բանտը դրուէր են Վարսիլիայի մէջ :

Եւս թէ տեսչութիւնը երկրորդ մեքենայ մըն ալ կը փնտռէ , որ Վարսիլիայի մէջ կամ շրջակաները պահուած կը կարծուի :

ԱՅԴՂԻԱ : Հանգուցեալ Ուէլ լինկըրնի դուքսին յուզարկաւորութիւնը աղբիւր և տէրութեան վրայ ըլլալով , աւոր մարմինը հասարակաց ինչք մը համարուած է Եւրոպայի մէջ : Իր ընտանիքը ամենեւին իրաւունք մը չունի աւոր վրայ : Ուէլ գնդապետը , որուն յանձնուած է Ուէլմըր Բասիլ պահուածութիւնը , աւտու իրկուէն կ'երթայ աչքէ կ'անցունէ այն սրահ , ուրուն մէջ դրուած է դուքսին մարմինը : այս այցելութեանն ետքը մարդկարող չէ այն սրահ մտնելու :

Օպերիլը անգղիական լրագրիւր կ'ըսէ . թէ դուքսին սենեկապանը Պ. Բէնտէլ իր հանգստութիւնը կորսնցուցեր է : Սենտէլը այս մարդուն կը գիտնէ , ոմայք դուքսին մարդը , ոմայք ալ անոր ինչ և իցէ մէկ բանը կ'ուզէ գնէ :

Եւս լրագրին մէկը 100 լիւրա բութիւն տուէր է դուքսին բանակի անկողինը գնելու համար : Ուրիշ աղետակուն մըն ալ ծանրութեամբ ուրի տալ ուղեր է ածուի մը , որուն մէջ դուքսը իր վերջին շունչը փչեց : Տիւ գեղին սափրիչը , որ դուքսին մաշկը կը կտրէր , թէ որ ամեն ուղղութեան մաշ օգտեցնելու ըլլայ՝ այսինքն թէ որ իսկը ունենայ , ամբաւ հարստութիւն կրնայ դիզել :

« Եւրոպայի և Վերիկայի մէջ ծուրան տակէն ելեքորական հեռագիր հաստատուելու խորհուրդ երկու կիսադուսններուն մէջ ալ շատ երեւելի մարդոց ուշադրութիւնը գրաւած է , որոնք մարդկային ճարտարութեան աւան հնարաւոր միջոցները ձեռք առած կ'աշխատին այս մեծ ու ամենազգուշոր գործը գլուխ հանելու :

Եւս ինքզնիք վրայ հետեւեալը կը կարգեն Տեյլ Եւս լրագրին մէջ :

« Եւրոպայի և հետեւեալ լըրագրական Վերիկայի մէջ հեռագրական հաղորդակցութիւն հաստատուելու հընարաւորութիւնը մտածութեան արժանի խնդիր մըն է , և թէպէտ աւանի գարու մը մէջ կ'աղբիւր , ուր գոգար-Բիւն և անհար-Բիւն բառերը պէտք է դուքս ձգուին ճարտարներուն բազմաթիւ , այսու ամենայնիւ Եւրոպայի ու Վերիկայի միջին 3000 միլիոն հեռաւորութիւնը զարհուրելի արգելք մըն է :

« Հեռագրութեան թելը հաստատուելու յարմար գալիք երեք գլխաւոր տեղերուն կամ ապագա մտնելուն մէկը արեւմտեան երկայնութեան 30 աստիճանին տակն է . Եւս Եւրոպայի 40 աստիճանին տակը կ'ընայ , ուսկից թելը պիտի անցնի երթայ թէպէտ օվի Սենթան քաղաքը , որ երկայնութեան 55 աստիճանին տակը կ'ընայ : Եւս կով լայնատարած ծովերէ պիտի անցնի , որոնց խորութիւնը շատ տարբեր է , և այնպէս դժուարութիւններ ունին , որոնց առջեւ առնելու անհնար կը թուի : Եւրոպայի ու Վերիկայի մէկ քանի կողմերը՝ մինչեւ հինգ միլիոն խորութեամբ գոլնու ձգուած է և դեռ յատակը չէ գտնուած : Տեղեր ալ կան , ուր ծովուն ամենէն խորունկ ձորերը կէս միլիոն երկու միլիոն կը հասնին , և խորունկ չեղած տեղերն ալ անանկ սուր ժայռեր ցցուած են , որոնք քիչ ժամանակի մէջ կը մաշեցնեն և կը բըրբընեն մետաղէկ թելը , որչափ ու ժով և որչափ աղէկ գոցուած ըլլայ :

Օպերիլը բոյսեր ալ կան լեռան պէս դիզուած , հաստութիւնն անձանօթ , որոնք հազարաւոր քառակուսի միլիոններով ծովուն յատակը ծածկած են : Թէ որ թելը ասոնց մէջ երթայ ինչպէ կամ բոգի նէ հանելուն ճարը չի կայ :

« Եւս գիտնալով , թէ որ երկու երկրին մէջ հեռագրական հաղորդակցութիւն հաստատուելու ուղի , հարկ լըլլայ անանկ ճամբայ մը փնտռել , ուրուն ցամաք երկիրը շատ ըլլայ և արգելքը քիչ : Եւրոպայի երկաթաւոր ճարտարակաւ տեղաբար , Հարիսն անուանով կ'երեւայ , որ այս խնդիրը լուծելու հիւսիսային կողմէն սկսիլ ու Ուրաղեան , Եւրոպայի ու Վերիկայի կողմէն կ'ընէր : Եւս թէպէտ Եւրոպայի կողմէն կ'ընէր , անոր հիւսիսային հրաւանդանէն երթալ լըրագրական յի արեւելեան կողմ , այս թերակողմին մէջէն անցնելով՝ Ոււրալիէն մի հրաւանդանին քովէն երթալ Տալիսի նեղուցը : Եւս վերին Բանատայի Զօտիւն ծովածոցէն անցնելով երթալ Բէպէլ , ուսկից բոլոր Եւրոպայի ցամաքին հետ կրնայ հաղորդակցութիւն հաստատուել : Եւս լըլլալով ծովուն տակէն անցնելը կտոր կտոր թելին բոլոր երկայնութիւնը՝ 2500 միլիոն աւելի չըլլար , որուն ամենէն երկայն կտորը Վերիկայի կողմէն մինչեւ Եւրոպայի հընդու 500 միլիոն կ'ըլլայ , որով գործոյն յաջողութեանը շատ կը դիւրանայ : Եւս լըլլալով Եւրոպայի ծովուն յատակէն անցնելու խորութիւնը՝ 150 Եւս 200 գրկաչափ է , յատուկ քար ու աւաղ է , և ծայրէ ի ծայր լեռ ու ձոր է , ուր բնաւ երկաթ չի ձգուիլ և հետեւաբար թելերը կատարեալ ապահովութեամբ կրնան իրենց արագ և գաղտնի պաշտօնը կատարել : Եւս մարդ քիչը աւելի երկայն կ'ըլլայ ծովանէն , բայց որովհետեւ ամենեւին դժուարութիւն մը չունի , թէ բարձր ձորերու վրայ առնուի և լէ գետնին տակէն ըլլայ , գլխաւոր և մէկ հաւտիկ դժուարութիւնը՝ գործածուելու թելերուն ամբաւ շատութեանը և հետեւաբար ծախքին վրայ է : Եւս հեռագրական քիչը թէ որ չինուի , վայրկեանական հաղորդակցութիւն մը բոլոր աշխարհը կը պատէ : Եւրոպայի կողմէն Ուրաղեան Վերիկայի երկրներէն անցնելով , Պէհրինի նեղուցը կը հասնի . այս նեղուցին ամենէն նեղ կողմը , որ 250 միլիոն է , ծովուն տակէն Ուրաղեան Եւրոպայի ցամաքը կը հասնի և Վերիկայի անցնելով՝ ելեքորական գոտի մը կը հաստատէ երկրագունտին բոլորովին , ուսկից դիւրաւ հաղորդակցութիւն ձեւեր կրնան հաստատուել լըրագրայի , Եւրոպայի և Վերիկայի գլխաւոր քաղաքներուն հետ : Եւս Վերիկայի Վերիկայի նահանգներէն ալ Եւրոպայի նեղուցը անցնելով՝ նոյնպէս հաղորդակցութիւն կը հաստատուի հարաւային Վերիկայի հետ : Եւս այժմ բաւական կը համարենք այսչափ մը խօսիլ այս խնդրին վրայ , որուն Տանի մարքայի կառավարութիւնն ալ իր հաւանութիւնը տուած է և կը խոստանայ իր երկրէն անցնելը քիչը պաշտպանելու : Տարակոյս չունինք , որ անխնդ գիտութիւնն այս գործը յաջողութեամբ կը հանէ : »

ԱՅՄՍԻԱ : Եւրոպայի քով պատրաստուած զինուորական մեծ կրթութիւնը սեպտեմբեր 21 ին կատարուեցաւ ի ներկայութեան Վ. Կայսեր և բազմաթիւ երեւելի զորապետներու և իշխաններու , որ Եւրոպայի ամեն կողմէն հոն ժողովուած էին : Եւս սեպտեմբեր 28 ին՝ Վ. Կայսրը Վ. Եւրոպայի դարձաւ : Եւս 1 ին նորէն ճամբայ ելաւ Եւրոպայի : Եւս քանի մը օր կէ

մու չարի, ստեղծող ստեղծող խառնելով և ատեն ատեն բաւական ջուր աւելցնելով, որ պակասին տեղը լեւոյ, միայն թէ ջուրը անանկ զգուշութեամբ աւելցնելու է, որ եռացումը չի կորի: (Նետոյ այս բաղադրութեան ջրային մասը քամելու և աղէկ գոցուած շինելու մէջ պահելու է: Վոյնը յստակ (պէռահ) է, Շամբանի գինիի կը նմանի, հոտը՝ հաճոյական է:

— Դիթարգրութեան էրբէն օգոստոս, Վաղդիոյ Իօն բարդէյլ բաղադրին մէջ հայր Սոնիդէ անուն պանդոկապետ մը՝ գինի հանելու համար միթերանուցը կ'իջնայ: Եանկարծ ոտքին տակի գետինը կը դողայ և հայր Սոնիդէ չորս միթերոյ խորութեամբ գուբի մը մէջ կ'իջնայ:

Իր աղաղակէն սպասաւորները կը վազեն շուտ մը սանդուխք և ճրագ կիւղեցնեն գուբին մէջ: Բայց Սոնիդէի աղգը (գալստ) խորտակած ըլլալով, շարժելու կարողութիւն չունէր:

Մի միջոցին աչքը չորս դին պլուտոններով կը տեսնայ, որ ընդարձակ միթերանոցի մը մէջ է ինքը, ուր ծայրէ ի ծայր գինիի տակառներ շարուած էին գեղեցիկ կարգաւորութեամբ:

Երբոր սպասաւորները զինքը այն տեղէն վերցնելու և անկողինը փոխադրելու կ'ըլլան, որ հոն իր վիճակին հարկաւոր եղած դարմանները ընեն, հայր Սոնիդէ չի հաճիր ու կ'ուզէ աւաջ հասնալ թէ տակառներուն մէջ ինչ կայ: Սպասաւորները կը քննեն տակառները ու կը տեսնան, որ ամեն ալ Վաղդիոյ և Սպանիոյ ընտիր գինիներով լեցուն են: Մի ժամանակը հայր Սոնիդէ ուրախութեամբ շնորհակալ կ'ըլլայ այս դիպուածին ու զինքը վեր փոխադրել կուտայ, որ ժամ մը յառաջ իր աղգը դարմանել տալով նոր գտած հարստութիւնը վայելէ:

ՏՆՏԵՍԵԼԵՆ

Ս Կ Զ Բ Ո Ւ Ն Բ

ՎԱՃԱՆԿԱԿԱՆՈՒԹԵԼՆ*

1 Ի՞նչ է հարստութիւնը — 2 Ի՞նչ է ընկերային հարստութիւնը — 3 Ի՞նչ յարգը և անոր պարբեր — 4 Ի՞նչ է քաղաքական և քաղաքական — 5 — Ի՞նչ իրիկ յարգը՝ քաղաքական և համայնական: — 6 Ի՞նչ յարգին լալը — 7 Պիպանութիւնը վերաբերական է — 8 Ի՞նչ է գինը — 9 Հասարակական միջ մարդուն և բնութեան գործակցութիւնը — 10 Հասարակական հասարակութեան բաժանումը — 11 Օրհնական խորհրդ հասարակութեան այլ և այլ անունը:

(Հարուստութեան տես թիւ 55)

6. Ի՞նչի մը համեմատական կամ վերաբերական յարգը (5) հասարակաբար իրեն շատ կամ քիչ պիտանի կամ գործածելի ըլլալէն կ'ախտալ ըլլալուն, անկող (համեմատական յարգը) ինքն իրեն բացարձակ կերպով մը չի չափուել, այլ միշտ փոխանակութեան ժաւանակ անոր հետ անհրաժեշտ ուրիշ բանի մը կամ փոխարժեքի մը մը որակով լինելով կը չափուի: Պարկ մը ջրերը Վրաբիոյ ցամաք անապատին մէջ աւելի յարգ ունի քան թէ Ռուսիոյ պլուտոնը բարեբաղտեան մէջ, Հորեհի մը ժամանակ սափոր մը ջուրը՝ հարկաւ հասարակ ժամանակէն աւելի կ'արժէ: Սանաւանդ նոյն ատեն հորեհիին մօտ տուն ունեցողին՝ հեռուն գտնուողին աւելի կ'արժէ:

Ուստի հարստութեան (1) տէր եղողները իրենց ունեցածներուն մը տօք կամ կամօք որչափ ալ բարձր գին կամ յարգ տան, անով չեն կրնար իրօք իրենց հարստութիւնը մատ մը աւելցնել, պէտք է որ ուրիշներն ալ

փոխանակութեան ժամանակ իրենց այն ունեցածներուն փոխարէն ուրիշ հաւաքաբար իրենց տալու հաճին, որով իրենց հարստութիւնը իրօք աւելցած ըլլայ: Ուրեմն, թէ մասնաւորաց և թէ ազգի մը հարստութիւնը իրեն ունեցածներուն փոխանակութեան կամ վերաբերական յարգէն կ'ապուած է, և ոչ թէ անոնց որքանութեան կամ ուրիշ պարագաներէ: Մասնաւոր թէ շատ անգամ կը տեսնենք կոր, որ վաճառանոցի մէջ ոչ միայն սոսի վաճառքներուն, այլ նաեւ նոյն իսկ ոսկւոյն աւաւորութիւնն անգամ իր յարգին կը փնտսէ և հետեւեալբար ալ ճշմարիտ հարստութիւնը կը պակսեցնէ կոր:

7. Նոյն խորհրդածութեամբ կրը նաեւ նաեւ գիւրաւ խելամուտը, որ իրաց պիտանութիւնն ալ բացարձակ չէ, այլ գործածողներուն անորմակացը ու ունակութեանցը և ուրիշ հաւաքաբար վարագաններու նկատմամբ կ'եւեընայ ու կը պակսի: Ուստի արհեստաւորները պիտի նային, որ ոչ միայն պարագայ չի կենան, աշխատին հարստութիւնը հաստեւալ, այլ և ջանան, որ այն շինածին ալ ամեն կերպ պիտ սպասողներուն անորմակացը հաւաքաբար և պիտոյիցը յարմար գան: Նոյնպէս վաճառականներն ալ պէտք է աշխատին, որ երկրէ երկիր տարած վաճառքին ամենայն նկատմամբ գնող ժողովուրդը յարմար ու հաճոյական ըլլան: Սեր երկրին արհեստաւորները տարուէ տարի իրենց գանկատը կ'աւելցնեն, թէ օր աւուր վրայ առուտունին կը նուազի ու հասարակութիւնը իրենց շինածը կը ձգէ օտարին շինածը կը գնէ: Ս'իս կողմէն ալ կը լսենք, որ ուրիշ ազգերը օր աւուր վրայ իրենց արհեստները ծաղկեցնելու, շատցնելու, վաճառականութիւնն ընդարձակելու վրայ են: (Օրինակի համար, անգլիացիք դարոյս սկիզբը՝ այսինքն 1800 ին, միայն 1.182.100 ծրար (թօփ) պատմայ կը գործէին: այս գուժարը 1830 ին 12.412.125 ծրարի հասեր է: 1800 ին անգլիացիք 56.730 կենդանի անարգ (չի բանուած) բուրդ կը գնէին, 1849 ին այս գուժարը 620.450 կենդանի անարգ հասած էր: 1796 ին անգլիացիք տարին 2.215.510 կենդանի անարգ կ'ալ իր հաւելցնէին: 1830 ին 11.593.650 կենդանի անարգ այս գուժարը իսկ հիմայ այս գուժարը 39.000.000 հասած է:

Վրուստից և վաճառականութեան ուրիշ ամեն նիւթերու վրայ ալ անտարակոյս նոյն համեմատութեան յաւաքը գայած են ոչ միայն անգլիացիք, այլ և ուրիշ ազգերը: Իսկ մեր խելձ՝ Բայց յամառեալ արհեստաւորները օր օրի վրայ ետ ետ կ'երթան: պատճառը ուրիշ բան չէ, այլ շինածին ժողովուրդեան անորմակին յարմարցնելու փորձ չունենալին: Դողովուրդը երբոր քաղաքակրթութեան օր օրի իր անորմակը կը կրթէ, կը բարձրցնէ, երբոր իր պիտոյքը կը շատցնէ, կը զանազանէ, ու կը փոփոխէ, արհեստաւորներն ու վաճառականներն ալ պէտք է որ ժողովուրդին բարուցն այս շարժմանը աւանայն ճշգրտութեամբ հետեւին, թէ որ վատըրիկ ու ապրիկ կ'ուզեն: Ընդհակառակն, թէ որ իրենց ամենագէտ հին վարպետներուն սորվածէն զատ ուրիշ չեն ուղեր, 1800 ին շինածին 1852 ին ալ շինել կուզեն, իրենց պիտանութիւնը կը նմանի այն կայնած ժամացոյցներուն պիտանութեանը, որ ժամը 12 գայած ատենը՝ իրենց սլաքը 1 կամ 2 կը ցուցնեն: կամ նման են այն անխոհեմ նաւաստիներուն, որ իրաց բնական ընթացիցը բուռն յորձանքը իրենց դէմը ունենալով, շինին նաւաւ կով մը անոր դէմ մոքառիկ կ'ուզեն: . . . ժամանակը մեզի յարմարցնելը մեր ձեռքը չէ, մենք պէտք է որ ժամանա-

կին յարմարինք:

8. Հարստութեան յարգը փոխանակութեան մէջ դրամով կ'որոշուի: Իրաց յարգը՝ այս միջոցով որոշելը աւանդէն գիւրի ըլլալուն, վարպետներն զատ ամեն ժողովուրդ փոխանակութիւնին դրամով կ'ընեն: Ինչու որ, դրամոց յարգն ու կշիւր ամեն կառավարութեան կողմէն ճշգրտ ըլլալով*, ամեն մարդ առած տուած դրամին յարգը գիւրաւ կը գիտնայ, կամ որոշեալ գուժար մը՝ դրամով իր պիտոյքը լեցնելը որչափ բարիք կրնայ ստանալ գիտէ:

Իրի մը դրամով որոշուած կամ չափ ուած յարգը իր գինը կ'ըսուի: Նայ, ոսկին ու արծաթը միայն հարստութիւն սեպելու ռաւից ծուռ կարծիքն ալ ասկէ յառաջ եկած է: ուր ճշմարիտ հարուստ այն մարդը՝ այն երկիրն է, որ իր կամ իր բնակչացը պիտոյքը ըստ բաւականին յագեցնելու պիտանի և յարգ ունեցող իրեն ունի:

9. Վերը (2) ըսինք, թէ ընկերական հարստութիւնը մարդուս իր ճարտարութեանը և աշխատութեանը պլուտոններն են: Նայ, ամենայնիւ այս կարգ հարստութեանց ամենուն մէջ հարկաւ քիչ շատ բնութեան ալ գործակցութիւնը կը գտնուի: քննէ՛նայէ, աշխարհի մէջ բան մը չի կայ, որուն վրայ բնութիւնն ու մարդը մէկ տեղ աշխատած չըլլան, թէպէտ քիչ կամ շատ չափով: Նայ երեւոյթը (Ֆէնոմեն) անանկ ընդհանուր է, որ ամեն չի կարծուած իրերուն վրայ ալ կը տեսնուի: Նայ ճշմարտութիւնը փորձով ցուցնելու համար, անթիւ օրինակաց մէջ անտեսականի մը ասեղին ու խնձորին վրայ տուած մէկ օրինակը մէջ բերեմ, որ խիստ կատարեալ օրինակ մըն է: Ինչ հանրապէս խնձորն ու ասեղը տեսնողը՝ առաջինը բնութեան ու վերջինը ալ մարդուն աշխատութեամբ հաստուած գործքեր կը կարծէ: Սա կայն խնձորը միայն բնութեան հաստուածը չէ: այլ երկրագործն ալ ծառը պիտուտաւորով (ալ է թմբ) յոտելով (պուտամբ) վրայէն ձգները մարդուով, բաժանելով (չոր տուր և համար ծառին տակը տեղ բանալ) ջրելով՝ անոր հաստմանը աշխատած է:

Նմանապէս ասեղն ալ բոլորովին մարդուն գործքը չէ, վասն զի, թէ որ բնութիւնը երկրակէն ու ածուխը չի տար*, մարդս ինչպէս կրնար պղծապատ շինել: Թէ որ բնութիւնը անոր մէջ քիմիական ձգողութիւն կամ իրար խանութելու յատկութիւն մը չի գնէր, մարդ ինչպէս կրնար ածուխին ու երկրակէն այն տարբեր մասոյնը (էլէման) իրար խառնել: Թէ որ բնութիւնը երկրակէն ծաւալականութիւն (տիւրութիւն) չի տար, մարդս ինչպէս կրնար կորզանէն (հատտէ) քաշել ու աչք բանալ: Թէ որ բնութիւնը պղծապատին ու իւր ըսուած կէտին մասնաւոր պիտութիւն չի տար, մարդս ինչպէս կրնար անոյ ըլլալը թելին ծայրը մաշէցնել ու անոր սուր ծայր մը տալ: Նայ ասանկ են ուրիշ ամեն հաստուածներն ալ, որոնց մէջ մարդն ու բնութիւնը քիչ շատ անպատճառ պէտք է որ մէկ տեղ աշխատին:

10. Սակայն մարդն ու բնութիւնը հաստուածի մը վրայ որչափ աշխատած ըլլան՝ տակուին ոչ կրնան յոշնէ հիւլէ մը ստեղծել և ոչ ալ հիւլէ մը ոչինչ դարձնել: Իսկ ըսածնին եղած իրերը այլափոխել է: այսինքն իրար խառնելէն, մէկ ձեւէն մէկալը մոցնելէն ուրիշ բան չէ:

* Նայ մասին տես կառավարութեան նոր հանած յայտարարութիւնը լրագրոյ 56 երորդ թուոյն մէջ: ** Գիտելի է որ պղծապատ ըսուած կարծիքը ցուցնելու երկրակէն ու ածուխէն կը բաղկանայ: Թէպէտ ածուխին ձիւր չափը գուռ որոշուած չէ, բայց հասարակ օրէն կը կարծուի որ երկրակէն մէկ հարկաւ քառասուններորդ մասն է:

Իրաւ երբեմն այս այլափոխութիւնները այն աստիճան մեծ ու կատարեալ կ'ըլլան, որ կը կարծուի թէ մարդըն ու բնութիւնը իրօք կրնան յոշնէց բան ստեղծել կամ չիք դարձնել: Օրոր օրինակ, շատ չընեն Վերիկայի մէջ մէկ կը հնարք մը գտաւ, կաշիի կտորներէն նորէն կաշի շինելու: այսմարդը կ'օչ կախարներուն գործարաններէն կաշիի (քօսելէ) անպիտան համարուած մաշկը կտորները կ'առնէ, զանոնք կը տանի մասնաւոր աղօթքի մը տակ կը մանրէ փոշի կ'ընէ, յետոյ մասնաւոր կաշուէ բաղադրութեամբ մը կը շաղուէ, զանգուած մը կ'ընէ, այն զանգուածը յատուկ մամուլներէ անցնելով՝ ուղղած աստիճան հաստութեամբ թերթ կը շինէ ու նոր կաշիի կը դարձնէ: Նայ արհեստական կաշիէն ոչ միայն ոտքի աւան կը շինեն, այլ և ջրի խողովակ և դոյլ (քովա) անգամ կը շինեն եղեր խիստ մեծ յաջողութեամբ: Ուրիշ մէկը՝ կը նայիս, որ կենդանեաց մարմի կը տարուանքները, մարդերը, ոսկորները իրար կը խառնէ ու քիմիական գործողութիւններով թերթ թերթ ստանձ (թուլթալ) կը շինէ: Սէկ ուրիշը՝ ձերմակ աւազ, կապար ու փփաւ ըսուած բուսական աղը իրար կը խառնէ անոնցմէ աղիւ ապակի կը շինէ: Նայ գին կը նայիս, որ մէկ շարքորդն ալ շողգամէն (չալկամ) ձաւնդեղէն (բանաւար) ու սաւաղիկէն (հաւուաւ) ձիւնի պէս ձերմակ շաքար կը հանէ եւ այն:

Հիմայ այն կաշին, այն ստանձը՝ այն ապակին և այն շաքարը՝ որ իրենց նախնական ձեւերէն այլեքան տարբեր են, ո՞վ տեսնէ նէ կ'ըսեմ, նոր նոր բուսական գործողութիւններ ու կատարեալ եղծումներ են ըսելու չի յօժարիր: Ի՞նչ համեմատութիւն կայ՝ դաշտերուն մէջ սփռուած աւազին, արտաբուս մէջ բուսած ձաւնդեղներուն ու այն տուաները զարգարող ապակիին և խաշիլէն ու մէկ գործածուած շաքարին մէջ տեղը: . . . , սակայն բոլոր այս գործքերը թէ որ բնարանական (ֆիզիք) և տարրալուծական (քիմի) գիտութեան միջոցներով քննելու ըլլանք, կը տեսնենք՝ որ ինչպէս ըսի, սոսի այլափոխութիւններու կը վերածին:

Ուստի հասկը ըսելով անտեսական լեզուին մէջ պէտք է իմանալ՝ յարգ ու պիտանութեան լեզուից իրաց յարգ ու պիտանութեան պալ, և ունեցողներուն ալ աւելցնել: Նմանապէս հասարակութեան ըսելով ալ պիտի իմանանք այն ամեն բաները՝ որ մարդուն ու բնութեան գործակցութեամբ պիտանութիւն ու յարգ գըտած են:

11. Վրաբիոյ մէջ հետզհետէ հրատարակելը հաստուածներուն մէջ շատ ատեն հարկ պիտի ըլլայ մարդկային ընդհանուր և մասնաւոր ճարտարութեանցը վրայ խօսելու: Ուստի ըսելըներս ձիւր հասկցուելու համար, աղէկ կ'ըլլայ, որ ճարտարութեան աւան մէկ ձիւրին իր մասնաւոր արգիւնքը առաջնայ մէկմէկ յատուկ անուամբ որոշելը: Նայայն, ընդհանուր ճարտարութեան արգեանցը՝ ընդհանուր անուամբ հասարակութեան ըսելով: Նետոյ ամեն մէկ ձիւրը իրարմէ որոշելով, մշակական արգեանց՝ բերք պիտի ըսեմ: ձեռնարկութեան արգեանցը՝ կերպարանք կամ գործածք ու տուրեւաւութեան նիւթ եղածներուն շաքար:

Պիպի շարանալորի:
Օ. Բ.

ԽՄԲԱՅԻՐ — ՏՆՏԵՍԵՆ
Կ. Ս. ԻԹԻԻԻԾԵԼՆ: